« Դարձեալ, գրեմք զձիոյն նշանքն. Ատամն՝
« բարակ պիտի և երկան, և միմեանց հեռի.
« և մէկմէկի մօտ և միմեանց կցեալ չի պիտի,
« և վերին շոթն (շուրթն) երկան պիտի քան
« զներքին, և վիզն բարձր պիտի և լայն.
« և ճակատն լայն և բաց. և ականջն բա֊
« րակ և երկան՝ որպէս եղեգան տերեւն. և
« վիզն շիտակ բռնէ և ոչ վեր և ոչ ի վայր.
« և խռնչակն բարակ լինի, և վիզին տակն
« թանձր լինի և որպէս գումտ. և մազն՝ շատ
« երկար պիտի, եւս առաւել սեւ պիտի, և
« ագին երկան և սեւ պիտի. և կռնակն
« կարճ պիտի և լայն, և կուրծքն մեծ և
« դուրս պիտի. ձեռքն և ոտքն բաց պիտի.
« և աչքն՝ եզան աչքին նման պիտի. և
« ունքն (յօնք) և բիբ աչացն երկան պիտի.
« աջ և ձախ ոտքն միապէս լինի, մէկն
« մեծ և մէկն փոքր չլինի։ Եւ թէ այս նշա֊
« նօքս ձի լինի, զինչ գին որ ծախեն՝ նա
« աժան է և անգին։ Ցրուշ ձին ոչ կարմիր,
« և ոչ սեւգուն լինի. այնոր թուրքի բառով
« տորի ասեն, եւս առաւել խուշրմայի տորի
« լինի. որ է մազն և մուլթն (քիլթն), ոտվին
« և ձեռքն և ագին սեւ լինին, այնոր խուշր֊
« մաի տորի ասեն. ցրտուն և ջերմանն աղէկ
« կու դիմանայ, և շնորհաւոր կու լինի, եւս
« առաւել (եթէ) ճակատն ճերմակ նշան լինի
« երկան կամ խաչաձեւ։ — Առաւօտուն
« երեսն հայելն՝ մարդոյն բանն աջող կու
« գայ և շնորհաւոր։ — Դեղին ձին՝ յոր֊
« ժամ ագին և մազն և մուլթն և ձեռքն
« և ոտվին սեւ լինի, և ինքն դեղնագուն,
« յուժով աղէկ կու լինի. և ապա սրտոտ և
« իւր տէրն ջանայ սպանանել՝ չի հաւատալ
« պիտի։ — Սեւ ձին շնորհաւոր կու լինի,
« թէ ի պատերազմի երթաս և հեծնուս, ի
« վերայ թշնամոյն զօրեղ և անահ երթայ.
« ապա անպատճառ բնութիւն մի վատ ունի,
« թէ ի նայելն, կամ զկռնակն քերելն, կամ
« խածանօղ կամ աձքի (աքցի) զարնօղն,
« բնութիւն մի վատ ունի։ Եւ թէ ի կճղակն
« սպիտակ նշան ունի բոլորապէս սպիտակ,
« փող մի չի աժէ, և իւր տիրոջն զենն հա֊
« սանէ. ապա երագընթաց լինի և վազող։
« Ալ ձին, որ է բաց կարմիր գունն՝
« յուժով երագընթաց լինի և վազող որպէս
« զթռչուն. ասեն թէ ձինն թռչաւ. ասեն
« առակաց, թէ ձինն որպէս թռչուն վազման,
« ասեն թէ միթէ՞ ալ ձին է, ով որ հեծնի
« ահեղ և շքեղ երեւնայ, և թագաւորաց
« վայելէ։
« Ճերմակ ձինն շնորհաւոր է և երագըն֊
« թաց. ապա ցրտոյն և ջերմանն չի դիմա֊
« նար, զի մորթն նօսր է. և թէ սըմպակին
« վրայ սեւ նշան երեւնայ, վատ է, իւր տի֊
« րոջն զեն հասանէ, և ինքն փող մի չի
« աժէ։ — Փըռ ձին՝ պինտ կու լինի, ցրտոյն
« և ջերմանն աղէկ կու դիմանայ. երագըն֊
« թաց կու լինի և շնորհաւոր. ապա թէ
« ոտից վերայ սեւ նշան լինի՝ որպէս փուլ,
« փող մի չի յաժէ։ — Եւ Ղըզ ձին՝ որ է
« բաց սեւագունն, երագընթաց լինի և վա֊
« զող, և չարագործ և տիրոջն հակառակ.
« ապա թէ ոտից վերայ սպիտակ նշան
« լինի՝ փող մի չի յաժէ։ — Չաքալ ձին՝
« որ է խառնգուն՝ սպիտակ և կարմիր, ա֊
« նոր չաքալ ասեն. թէ չորս ոտքն միապէս
« լինի, վատ է. և թէ մուլթն ապրազ լինի՝
« որ է սպիտակ, վատ է, փող մի չի յաժէ.
« և թէ ճակատն սպիտակ նշան լինի երկան
« կամ խաչանման, շնորհաւոր է առաւօտուն
« երեսն հայելն։ — Ցեղ մի խառնգուն ձի
« կայ՝ Ալաձայ ասեն թուրք բառովն. ասեն
« թէ ի մայիսի ամիսն է ծնել՝ երագընթաց
« է, ապա ուղուր (բաղդ) չի ունի, որ տեղ
« որ երթաս՝ բանդ չի յաջողի։ — Մկըն֊
« գուն ձինն երագընթաց է և շնորհաւոր,
« որչափ զօրես թէ վազող է՝ կարես զօրել,
« ձի՝ նմա չի կարէր հասանել։
« Քուշլա ասեն որպէս դեղին լինի, ոչ
« սեւ և ոչ դեղին, անոր քուլայ ասեն. թէ
« մազն և ագին և չորս ոտքն սեւ լինի՝
« շնորհաւոր է և տիրոջն շահարար. և թէ
« ապրազ մուլթն՝ փող մի չի յաժէ, զի
« զեն հասանէ իւր տիրոջն. թէ ոտից վե֊
« րայ սպիտակ կամ սեւ նշան լինի. փող
« մի չի յաժէ։ — Եւ թէ ձինն որ գուն
« որ լինի՝ թէ չորս ոտքն սպիտակ լինի՝ փող
« մի չի յաժէ. թէ երեք կամ երկուք լինի՝
« շնորհաւոր է, եւս առաւել ի ճակատն նշան
« լինի երկան կամ խաչանման, աննման է։
« Ջիուն ամեն ատեն աղէկն չի գտնըւիր.